ՀՖԿՍՊԻ

WIGMORE CLINIC

Քայլենք Միասին
Let Us Walk Together

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ՈՒԻԳՄՈՐ ՔԼԻՆԻՔ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԻՋԵՎ

***Հաշվի առնելով,*** որ Կողմերն ընդունում են փոխադարձ համագործակցությունը և փորձի փոխանակումը կինեզոլոգիայի և կինեզոթերապիայի ոլորտում

***Նկատի ունենալով,*** որ համատեղ համագործակցությունը հնարավոր է միայն կառուցողական փոխգործակցության և փոխօգնության կազմակերպմամբ

***Կարևորելով*** կինեզոլոգիայի և կինեզոթերապիայի պրակտիկությունը կրթության կազմակերպման գործում

***Ընդունելով*** կինեզոլոգիայի և կինեզոթերապիայի ոլորտի տեսության և պրակտիկայի զուգահեռ զարգացմանն ուղղված Կողմերի ջանքերը և պատրաստակամությունը

***Հիմք ընդունելով*** սույն Հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները

**Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝**

## 1. Համագործակցության նպատակը

Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

## 2. Համագործակցության ուղղությունները

2.1 Սույն Հուշագրով Կողմերը համագործակցում են.

2.1.1 «Ուիգմոր քլինիք» բժշկական կենտրոնում (այսուհետ՝ Բժշկական կենտրոն) ուսանողների պրակտիկաների կազմակերպման միջոցով,

2.1.2 Ինստիտուտի կրթական ծրագրերի մշակման աշխատանքներում,

2.1.3 նորարարական, ծրագրերի համատեղ իրականացման շուրջ,

2.1.4 սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման միջոցով,

2.1.5 Կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրատարակման ոլորտում,

2.1.6 սույն Հուշագրի գործողության շրջանակներում Կողմերի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, Բժշկական կենտրոնի տարածքների, գույքի օգտագործման միջոցով,

2.1.7 երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում հետազոտությունների, փորձաքննությունների իրականացման շուրջ,

2.1.8 համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու գործում:

2.2 Կողմերն իրականացնում են նաև մասնագիտական և ասպիրանտական հետազոտական համատեղ ծրագրեր:

2.3 Երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական (վերականգնողական, առողջարանական և այլն) բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում համատեղ հետազոտությունների իրականացում:

2.4 Համագործակցում են միջազգային գիտական կոնֆերանսների, սեմինարների, ստեղծագործական բանավեճերի, խորհրդակցությունների համագործակցության շրջանակներում:

2.5 Իրականացնում են գիտական, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակում:

2.6 Կարող են համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցել և ստանալ:

2.7 Իրականացնում են Կողմերի գրադարանային ֆոնդի համատեղ օգտագործում:

## 3. Համագործակցության սկզբունքները

Կողմերը սույն Հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, համագործակցության սկզբունքներով:

## 4. Եզրափակիչ դրութեր

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն Հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն Հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.4 Յուրաքանչյուր կողմ կարող է միակողմանիորեն խզել Հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

4.5 Սույն հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2020թ. դեկտեմբերի 14-ին:

4.6 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

**Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները**

| Կողմ 1 | Կողմ 2 |
|---|---|
| «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ | «Ուիզմոր քլինիք» բժշկական կենտրոն |
| ք. Երևան, Ալեք Մանուկյան 11, 0070 | ք. Երևան, Պուշկինի 56, 0002, |
| ռեկտորի ժ/պ՝ Դավիթ Խիթարյան | Ղեկավար՝ Զավեն Քոլոյան |
| ստորագրություն, Կ.Տ. | ստորագրություն, Կ.Տ. |